ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 7
ՀՀ Լոռու մարզի զբաղվածության աջակցության
մարզային հանձնաժողովի նիստի

18.07.2019թ. ք.Վանաձոր

Մասնակցում էին՝

ՀՀ Լոռու մարզի զբաղվածության աջակցության մարզային հանձնաժողովի անդամներ, Վանաձորի, Սպիտակի, Ստեփանավանի և Ալավերդու զբաղվածության տարածքային կենտրոնների տնօրեններ և ծրագրերի պատասխանատուներ, Ալավերդի, Ազնվաձոր, Դարպաս, Գեղասար և Գյուլագարակ համայնքների ղեկավարներ/ներկայացուցիչներ, ծրագրերի տարածաշրջանային խորհրդատուներ:

Օ ր ա կ ա ր գ ա ն ա ն՝

1. ՀՀ կառավարության 17.04.2014թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված Հավելված 21-ի՝ վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման կարգի պահանջներին համապատասխան նախորդ նիստից հետո ընկած ժամանակահատվածում կատարված աշխատանքների մասին տեղեկատվության ներկայացում:
   /Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյան/
2. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի կողմից իրականացվող «Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ բնակավայրի գերեզմանատան ցանկապատում և բարեկարգման աշխատանքներ» ծրագրի ընթացքի մշտադիտարկման /մոնիթորինգի/ արդյունքների ներկայացում.
   /Զեկ.՝ Ստեփանավանի տարածաշրջանում իրականացվող ծրագրերի խորհրդատու Վաղարշակ Եղիազարյան, Ստեփանավանի ՋՏԿ-ի տնօրեն Ստեփանավանի ՋՏԿ-ի գլխավոր մասնագետ, ծրագրի պատասխանատու Գևորգ Դավթյան/
3. Գուգարքի տարածաշրջանի Ազնվաձոր համայնքի կողմից իրականացված «Գերեզմանների ցանկապատում և տարածքի բարեկարգման աշխատանքներ» ծրագրի ավարտական աշխատանքների մասին:
   /Ազնվաձոր համայնքի ղեկավար Նարեկ Հովսեփյան, Վանաձորի ՋՏԿ-ի տնօրեն Արա Առաքելյան, Գուգարքի տարածաշրջանում իրականացվող ծրագրերի խորհրդատու Վալերի Ջաղինյան/
4. Գուգարքի տարածաշրջանի Դարպաս համայնքի կողմից իրականացված «Մանկապարտեզի խաղահրապարակի կառուցման և բարեկարգման աշխատանքներ» ծրագրի ավարտական աշխատանքների մասին:
   /Դարպաս համայնքի ղեկավար Արմեն Ալոյան, Վանաձորի ՋՏԿ-ի տնօրեն Արա Առաքելյան, Գուգարքի տարածաշրջանում իրականացվող ծրագրերի խորհրդատու Վալերի Ջաղինյան/
5. Սպիտակի տարածաշրջանի Գեղասար համայնքի կողմից իրականացված «Բնակչության սոցիալական պաշտպանության /ծիսակատարությունների և

հանդիսության սրահ/ հաստատության վերանորոգում և տարածքի բարեկարգում» ծրագրի ավարտական աշխատանքների մասին:

/Զեկ.՝ Գեղասար համայնքի ղեկավար Վարազդատ Գրիգորյան, Սպիտակի տարածաշրջանում իրականացվող ծրագրերի խորհրդատու Գայանե Բոջուկյան, Սպիտակի ՀՏԿ-ի տնօրեն Գագիկ Ստեփանյան/

6. Թումանյանի տարածաշրջանի Ալավերդի համայնքի կողմից իրականացված «Ալավերդի համայնքի գերեզմանատան ցանկապատում» ծրագրի ավարտական աշխատանքների մասին:

/Զեկ.՝ Ալավերդու համայնքապետարանի ներկայացուցիչ Հրայր Նազարյան, Թումանյանի տարածաշրջանում իրականացվող ծրագրի խորհրդատու Իրինա Գրիգորյան/

7. Այլ հարցեր:

Հանձնաժողովը որոշեց՝

Արձանագրել՝

1. Ազնվաձոր համայնքի կողմից իրականացված «Գերեզմանների ցանկապատում և տարածքի բարեկարգման աշխատանքներ» ծրագրի ավարտը:

2. Դարպաս համայնքի կողմից իրականացված «Մանկապարտեզի խաղահրապարակի կառուցման և բարեկարգման աշխատանքներ» ծրագրի ավարտը:

3. Գեղասար համայնքի կողմից իրականացված «Բնակչության սոցիալական պաշտպանության /ծիսակատարությունների և հանդիսության սրահ/ հաստատության վերանորոգում և տարածքի բարեկարգում» ծրագրի ավարտը:

4. Ալավերդի համայնքի կողմից իրականացված «Ալավերդի համայնքի գերեզմանատան ցանկապատում» ծրագրի ավարտը:

Հանձնարարվեց՝

1. Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյանին՝

Ներկայացնել ավարտված ծրագրերի մասին ՀՀ Լոռու մարզպետի որոշման նախագիծ:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԳԱՅԱՆԵ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Կազմեց՝ Հանձնաժողովի քարտուղար Վ.Ջաղինյանը /2-33-99/